Շաբաթ 9 Նոյեմբերի № 44 1874 Շաբաթ 9 Ն մբերի № 44

Լրագրիս միջոցով որևիցէ յայտարարութիւն տպագրել տալ ցանկացողը պէտք է 10 միջակ տառերի համար վճարէ 1 կոպէկ: Յայտարարութիւնները ընդունվում են Հայերէն և ռուսաց լեզուներով:

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԺԷ ՏԱՐԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հրատարակվում է ամեն շաբաթ օր մի թերթ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռ: Ստորագրվել կարելի է խմբագրատանը (Ս. Վարդանեանի տանը) և Համ. Էնֆիաճեանցի խանութում:

ԺԷ ՏԱՐԻ

FRANCE ET PAYS ETRANGERS

S'adresser pour les annonces et les abonnements a M. M. Bouêt et C-° (Office de publicité), 23 rue de Chaussée-d'Antin.

Խմբագրութիւնս խոնարհաբար խնդրում է այն անձանց, որոնք չեն վճարել մեր լրագրի բաժանորդագրութեան գինը, բարեհաճին շուտով ուղարկելու այն խմբագրութեանս:

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ քաղաքական, ազգային, բանասիրական լրագիրը կը շարունակվի մեր խմբագրութեամբ առաջիկայ 1875 թուականին նոյն ուղղութեամբ եւ նոյն դիրքով:

Խմբագրութեանս պարտաւորեալ գործակիցներ առաջիկայ 1875 թուականին կլինին մեծ. պ. պ. Ս. Արծրունի, Ա. Նահապետեանց, Մ. Սիմէօնեանց, Մ. Սուլեանց, Գ. Տէր Աղէքսանդրեանց, Յ. Տէր Յովհաննիսեանց և Ս. Քիշմիշեանց:

Լրագրիս տարեկան գինը մնում է եօթը ռուբլի: Փոստի և տուն հասցնելու ծախքը խմբագրութեան վերայ է:

Բաժանորդ լինել ցանկացողները կարող են դիմել խմբագրութեանս հետևեալ հասցէով. ВЪ РЕДАКЦІЮ АРМЯНСКОЙ ГАЗЕТЫ „ПЧЕЛА АРМЕНІИ“ ВЪ ТИФЛИСЪ. Իսկ քաղաքիս մէջ բաժանորդ գրվել կարող են հետևեալ տեղերում.

ա) ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (պարոն Ս. Վարդանեանցի տանը, հեռագրի կայարանին կից, Վանքի թաղում),

բ) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ, որ գտնվում է պ. Համբ. Էնֆիաճեանցի և ընկ. տպարանում (Գոլովինսկիյ պրոսպեկտի վերայ, բժշկապետ Մ. Ռօտինեանցի տանը) և

գ). Գ. Համբ. Էնֆիաճեանի ԾԽԱԽՈՏԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ (Դվորցովըյ փողոցի վերայ, գեներալ Արծրունու պալատում № 3),

ԽՄԲԱԳԻՐ Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ:

Թիֆլիս 9ն Նոյեմբերի

Կ. Պօլսոյ Մասիս լրագրի ներկայ տարւոյ Հոկտեմբերի 19 ի համարում կրօնական ժողովի կարգադրութեանց մէջ ի միջի այլոց կարդում ենք և այն, որ նա կարգադրել է դադարեցնել քահանայից ձեռնադրութիւնը Կ. Պօլսում, մինչև ժողովը շուտով կը պատրաստէ և կը հրատարակէ ձեռնադրելեաց պայմաններն ու հանգամանքները: Վաղուց պէտք է ուշադրութիւն դարձնէր կրօնական ժողովը այսպիսի նշանաւոր և կարևոր հարցերի վերայ: Որքան նշանակութիւն ունին եկեղեցականները մի աստուածապետական և կրօնական ազգի համար, ինչպիսի է Հայոց ազգը իրօքապէս, ամեն մարդու յայտնի, որ մերձաւորապէս ծանօթ է Հայոց անցեալին և նորա ներկայ հանգամանքներին. այս ուրանալը ազգի կարիքն ու նորա ներկայ դրութիւնը ճիշդ չը ճանաչելն է: Հայ քահանան Հայի խորհրդակիցն է, նորա յուսակիցն է, նորա խղճի ղեկավարն է, նորա ընտանեաց մտերիմ բարեկամն է և ի վերջոյ նորա սրտակէտն. ամեն բանէ, ամեն հանգամանքում նորա վերայ ազդելու միջոց ունեցող անձն է: Այս պատճառով լինելով յետ աւելորդ է երկարօրէն խօսել նորա վերայ, թէ ժողովրդեան վերայ այդպիսի ազդեցութիւն ունեցող և նորա կեանքի մէջ այդպիսի մեծ նշանակութիւն ունեցող անձինք որպիսի յատկութիւններ պիտի ունենան: Փորձած բարեպաշտութիւն և գիտութիւն ահա այն երկու յատկութիւնքն, որ անհրաժեշտ են քահանային և անբաժան նորա պաշտօնից: Բայց՞ ներկայումս թէ մէկը և թէ միւսը մեր եկեղեցականներից շատ քչերին են յատուկ: Պարզ է մի ժողովրդեան վիճակ, երբ նորա խորհրդակիցն ինքն անխորհուրդ է, երբ նորա բարեկամն յօնքը շինելու փոխարէն, միայն նորա աչքը հանելու ընդունակ, երբ նորա ղեկավարը, ինքն կարօտ է առաջնորդի: Ամեն կողմից լսվում են դանդատներ և այս շատ վաղուց, թէ մեր եկեղեցականներն մեծ մասամբ անյարմար են իրանց պաշտօնին և չեն կարողանում ժողովրդեան մէջ խաղալ այն դերը, որ կը պատկանի նրանց: Նկարագրվում են եկեղեցականների գործերը ամենամռայլ գոյներով, որոնք շատ անգամ գրաւանք են յարուցանում և վրդովում սիրտ. բայց գործն ի՞նչ օգուտ գրանից. ցաւն ի՞նչ դարման. երբ էլի օրից օր աւելանում է նոյնպիսի անարժան եկեղեցականաց թիւը: Հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ազդու և վճռական ուշադրութիւնը այս կարևոր առարկայի վերայ: Եթէ հոգևոր իշխանութեան պարտքն է (որ անտարակուսելի է) հսկել և հոգալ ազգի բարոյական և մտաւոր զարգացման վերայ, անշուշտ արժանաւոր եկեղեցականներ պատրաստելը պիտի նորա գործունէութեան և հոգատարութեան առաջին առարկան լինի: Եւ այս դժուար չէր նորա համար: Հարկաւոր էր միայն նրան սրբել ամենայն խստութեամբ քահանայից ձեռնադրութիւնը ամենուրեք. որոշել այն հանգամանքներն ու պայմաններն, որոնք կարող էին միայն որևիցէ անձնի քահանայական բարձր և նշանաւոր պաշտօնին արժանացնել: Թո՛ղ արտաքոյ այն որոշեալ հանգամանքների և պայմանների անհնարին լինի քահանայութեան համնել: Ծխական ժողովուրդն ու եկեղեցու միաբանք կարող են այն վկայել ձեռնադրելոց բարոյականութեան, որոնք նոցա մէջ ապրել են և գործել. բայց այս հերիք չէ. այլ հարկաւոր է քահանային և գիտութիւն, որ կարելի է ըստանալ կանոնաւորապէս ուսումնարաններում: Ուստի և մեր կարծիքով լաւ կըլինէր, որ հոգևոր իշխանութիւնը բարեկարգելով իւր հոգևոր դպրոցներն յարմարեցնէր սրանց արժանաւոր եկեղեցականներ պատրաստելու համար: Էջմիածնայ Ճեմարանը առաւելապէս կարող էր վարդապետներ և հոգևոր թեմական դպրոցներն քահանայացուներ պատրաստել: Հանգուցեալ երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը, այս հարցի նշանակութիւնը զգալով, հրամայում էր Ներսիսեան դպրոցի ուսումնաւարտ արժանաւոր աշակերտներին քարոզել եկեղեցիներում և հրամայում էր տալ նրանց վկայական թէ արժանի են քահանայութեան: Այժմ ևս կարելի էր կարգադրել, որ միայն որոշեալ դպրոցներում ուսումնաւարտ և լաւ վարքով և բարքով մէջ վկայական ստացածները կարող լինին արժանանալ քահանայութեան. իսկ դրսէ արտաքոյ որոշեալ դպրոցների անձամբ պարապելով ուսել են, եթէ կամենում են քահանայանալ, թո՛ղ պարտաւորվին քննութիւն տալու որևիցէ ուսումնարանում ուսուցչական ժողովի ներկայութեամբ, գոնէ այն առարկաներից, որոնք անհրաժեշտ են քահանային և ըստանան վկայական, որ միայն կարող լինի նրան հասցնել իւր նպատակին: Գոնէ այս սկզբում, մինչև դպրոցներն կը բարեկարգվին և կը բազմանան, կնուազեցնէ քա-

Ո՞ՒՐ ԵՆ ԼԵՀԱՍՏԱՆՑԻ ՀԱՅԵՐԸ

Միատասնեկերորդ դարից սկսած Հայաստան աշխարհը սկսում է դատարկվել և նորա հարազատ բնակիչները՝ Հայերը սկսում են գաղթել ուրիշ աւելի ապահով և խաղաղ երկիրներ: Այդ գաղթականութիւնները սկզբում հաստատուած են Ղրիմում, Սև ծովի ափերում առհասարակ և յետոյ գլխաւորապէս Լեհաստանում, որ այն ժամանակները ընդարձակ և անկախ տէրութիւն էր:

Հայերի մի քանի գովելի և նախանձելի յատկութիւնները, զոր. նոցա ժիր վաճառականութիւնը, տիրասէր հաւատարմութիւնն և խաղաղասէր ու անխռով բարքը տեղիք տուին օտար տէրութիւններին զանազան արտօնութիւններ շնորհելով գրաւել նորանց իրանց իշխանութեան տակ:

Մի Լեհերէն գրուածքից երևում է, որ Լեհաստանի գաղթականութեան սկիզբը 1061 թուին է եղել, երբ Սելջուկեան Ալփ Ասլան Սուլթանը մի վերջին անբուժելի հարուածով աւերեց Մեծ-Հայքի Անի մայրաքաղաքը: Հայերը նախ բնակել են Ղրիմում և Ռուսաստանում, ուր Ռուս իշխանները զանազան արտօնութիւններ են շնորհել նրանց և իրաւունքներն ու ազատութիւններն անխախտելի թողել, որի փոխարէն Հայերն օգնութիւն տուին նրանց Պօլովցիների դէմ յաջողութեամբ պատերազմելու: Այնուհետև Հայերը մեծ համարումն են գտնում Ռուս իշխանների կողմից, այնպէս որ 1062 թուին Թէոդոր Դիմիտրիէվիչ իշխանը հրաման է տալիս նրանց բնակել Կարմիր Ռուսիայում, որ այժմեան Ռուսաստանի հարաւ արևմտեան մասն է:

1270 թուին Գալիցիայի Լեոն իշխանը մի քաղաք շինեց Խըլ կամ Լվով անունով և ընակիչներից այնուհետ ամենուրեք ցրուած Հայերին որոնց հրաման տուեց պահպանել և պաշտել իրենց սեփական իրաւունքներն և որովհետև Լեոնը այդ նոր գաղթականների գործակցութեամբ և օգնութեամբ նուաճեց Ռուս իշխաններին, միքանիսին խաղացնելով և մի քանիսին շահաւէտ դաշինքների հարկադրելով, որով Գալիցիայի իշխաններն աւելի հզօրացան և գրեթէ նոր տէրութիւն կազմուեցաւ Ռուսիայի մէջ, ուստի նա իրեն վարձատրութիւն ուրիշ անձնաշնորհութիւններն էլ շնորհեց այդ գաղթականներին:

Հայերի Լեհաստանում հաստատուիլը և յառաջանալն սկսվում է Լեհաստանի Կազիմիր Մեծ անունով թագաւորի օրերից: Սա կարմիր Ռուսիային տիրելուց յետոյ, մեծ ուշադրութիւն դարձրեց Խըլվում բնակող Հայերի վերայ և նրանց այն իրաւունքներն ու առանձնաշնորհութիւնը, որոնք շնորհուած էին նրանց Բագրատունի թագաւորներից:

Կազմիրը հրաման տուեց Հայերին Մագդեբուրգեան օրէնքը գործ դնել, որ այն ժամանակ շնորհել էր նա մի քանի Լեհական քաղաքներին. յետոյ նա հրաման տուեց Հայերին ազատութեամբ պաշտել իրենց հարազատ կրօնը և Հայոց եպիսկոպոսի մշտական աթոռատեղի նշանակեց Խըլ քաղաքը, որով և ճանապարհ բացուեցաւ խումբ Հայ ժողովրդեան, հետզհետէ բազմանալուն: Այդ Հայ ժողովուրդը ինչպէս յայտնի է, վայելում էր այն իրաւունքներն, որ տիրող ազգն էր վայելում, նորա դատարարութիւնքն ինչպէս և Լեհերինը Մագդեբուրգեան օրէնքով էր կատարվում. բայց Մագդեբուրգեան դատաւորները կամ ինչպէս Լեհացիք կոչում են նրանց Վօյթոնները ոչ Հայ լեզուին էին ծանօթ և ոչ էլ նրանց օրէնքներին ու աւանդութիւններին. ուստի աւելի լաւ էին համարում դատաստանական գործերը գերմանական (Մագդեբուրգեան) օրէնքով վճռել, առանց ուշադրութիւն դարձնելու Հայերի օրինագրքերի վերայ: Այս մասին Հայերն արդարացի բողոքներ արին և հարկադրեցին Լեհաստանի Լուդվիկ թագաւորին 1374 թ. շնորհել մի արտօնագիր, որով նուիրագործուեցան նոցա նախնի օրէնքները, յատկապէս այն պատճառով, որ Հայերի թիւն այն ժամանակ աւելացած էր երկրորդ գաղթականութեամբ, Կիլիկիայի թագաւորութեան անկման ժամանակ 1374 թ.: Հայերը ունէին Խըլում և իրենց սեփական քաղաքային կառավարութիւնը, որ բոլորովին ջոկ էր Լեհական կամ Գերմանական կառավարութիւնից. շատ հաւանական է, որ այդ կառավարութիւնը կազմվում էր արհեստաւորներից (աւ. հասարակ անդամների գլխաւորներից) ինչպէս այդ սովորութիւն և կարգը ընդունուած էր ամեն հայրենիկ հասարակութեանց մէջ: Գաղթական Հայերի հասարակական կեանքը աւելի զարգացաւ Սիգիզմունդ Ա.-ի թագաւորութեան օրերում ըստ որում այն ժամանակ հիմնուեցան ու վերանորոգուեցան եկեղեցիներն և աղօթատները: 1510 թուին. Սիգիզմունդ Ա.-ը հրաման տուեց Հայերին Մագդեբուրգեան օրէնքներին հնազանդելուց ազատ մնալ. միայն մի քանի յօդուածների ներգործութիւնը թողեց Հայերի վերայ, և այդ յօդուածները, ինչպէս յիշվում է Լեհերէն գրուածքի մէջ, հետևեալներն են՝ Ա.) անշարժ կալուածների, տների, վաճառանոցների և բանջարանոցների գործերը Բ.) քաղաքի մէջ և նրանից դուրս կատարուած խռովութիւնները, Գ.) մարդասպանութիւնները և զանազան մարմնատանջութիւնները և Դ.) գողութիւնները. այս ամենը Մագդեբուրգեան կամ գերմանական օրէնքներով էին դատվելու: Բացի այն Սիգիզմունդ Ա. հարկաւոր համարեց ուղղել, փոփոխել և ճոխացնել օրինագրքի յօդուածներից շատերը և Հայերի օրինագիրքը Լատին լեզուով թարգմանել տալ: Այս դիտաւորութեամբ պատուիրեց նա Հայերին իրենց օրինագիրքը պատրաստել և ներկայացնել իրան: Հայերն անյապաղ կատարեցին թագաւորի կամքը և Լատին լեզուով թարգմանել տուին իրենց ամենահին օրինագիրքը, որ պահվում էր Էջմիածնում: Այդ օրինագիրքը թագաւորին ներկայացնելուց յետոյ հաստատուեցաւ Պետրոսեան ծերակոյտի ձեռքով 1521 թուին: Միայն յետոյ այդ օրինագրքի մի մասը փոփոխութեան տակ ընկաւ, աւելի յարմարուելով տեղական և քաղաքական օրէնքների հետ:

Որովհետև Լատիներէնը Հայերի մեծագոյն մասին անծանօթ էր, իսկ իւրաքանչիւր Հայ պարտաւոր էր գիտենալ իւր օրէնքը, 1528 թուին Հայերի օրինագիրքը թարգմանուեցաւ Լեհ լեզուով և այդ թարգմանութեան ձեռագիրն էլ այժմս գտնվում է Լվովի Հայերի կապիտուլի դիւանատանը:

1601 թուականին Սիգիզմունդ Գ.-ղի թագաւորութեան ժամանակ բոլոր Հայ գլխաւորների հրամանով միևնոյն օրէնքները կրկին թարգմանուեցան Լատին լեզուով 35 յօդուածաբաժանութեամբ: Այս թարգմանութիւնը յայտնի է միքանի օրինակներով և տպուած կայ «Հին մատենագիրների թանգարան» անունով գրքի առաջին հատորում, որ Վոյցիկու աշխատութեամբ լոյս եկաւ այս XIX-որդ դարում: Այդ օրէնքների հաւաքելը և վերահաստատել տալը կայացաւ եւ 1640 թ. երբ Խըլվի քաղաքային կառավարութեան ատենադպիր Շիմոն Զիմորովիչը յիշեալ օրէնքները և այն առանձին արտօնագրերը, որոնք շնորհուած էին Հայերին զանազան թագաւորներից, հաւաքեց և ներկայացրեց Վլադիսլաւ Դ. թագաւորին հաստատելու. այդ հաւաքածոյի ձեռագիրը գտնվում է Պուլաւում, որ այժմս Նոր Ալէքսանդրիա է կոչվում:

Այդ հաւաքած արտօնագրերի մէջ պէտք է լինին անշուշտ և Ստանիսլաւ Օգոստոսի շնորհածները: Այդ թագաւորը 1549 թ. հրաման տուեց, որ Հայերը հնազանդին միմիայն թագաւորական դատաւորներին. իսկ միւս դատարանների իրաւասութեան ազդեցութիւնից միանգամայն ազատ մնան. բացի այս՝ նա ընդարձակեց Հայերի վաճառականութեան ահանդից Թիւը. բայց հոգ չէ. լաւ է քիչ ու ընտիր, քան շատ ու անօգուտ և վընասակար: Մենք աչքով տեսնում ենք, որ եթէ այսօր էլ կան մի քանի արժանաւոր քահանայք, որոնք գործում են ժողովրդի բարոյական շինութեան համար ամեն տեղ, ըստ մեծի մասին կամ Ներսիսեան և կամ մի այլ փոքր ի շատէ գիտութիւն աւանդող ուսումնարանների աշակերտներն են, որոնք աւելի կամ պակաս կանոնաւոր ուսումն և դաստիարակութիւն են ստացած: կարծում ենք, որ այս հանգամանքը շատ համոզիչ պիտի լինի:

Իրաւ է հոգևոր իշխանութեան կողմից եղել են քանիցս մի քանի կարգադրութիւնք այս մասին. միայն սոքա էլ կողմնակի պատճառներով շատ անգամ չը գործադրած են մնացել: Այդ կարգադրութիւններն պէտք է անդառնալի օրէնք լինեն ամենքի համար: Գուցէ ներկայումս շատերը դժգոհ լինին. միայն ապագան և պատմութիւնը կը գնահատէ հոգևոր իշխանութեան այդ խստութիւնն և կը վայելէ նորա արդարև շնորհակալութեամբ:

Մեղուի ներկայ համարում հրատարակում ենք համաձայն մեր խոստման Ո՞ւր են Լեհաստանի Հայերը յօդուածի կէսը — միւս կէսը թողնելով առաջիկայ համարի համար: Խմբագրութիւնս շնորհակալութեամբ կընդունէ Հայ գաղթականութեանց վերաբերեալ մինչև անգամ անմշակ նիւթեր: Այս հարցն այնքան քնքոյշ է և խրատական Հայ ազգի համար, որ ամեն Հայ չը պիտի խնայէ իւր ձեռքից եկածն այս մասին: Մենք Մեղուի մէջ տպեցինք արժ. Մկրտիչեան վարդապետ Մուրատեանի մի քանի նամակները Գալիցիայի և Իտալիայի Հայ գաղթականութեանց համար և կը յուսանք, որ նորա ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ կըգտնենք շատ հետաքրքրական և նոր տեղեկութիւնք այս մասին. ուստի և կը խնդրենք արժանապատիւ հայրից մի օրինակ նորանից խրկել խմբագրութեանս: Տարակոյս չունինք, որ արժ. Հօր գրուածքը լի կը լինի զգացմունքով և ուղիղ հայեացքներով:

ԱԶԳԱՅԻՆ

Այս տարի յուլիսի 12-ին, Աժդարխանի վիճակի Հայոց առաջնորդի միջնորդութեամբ բարձրագոյն հաստատուել է Աժդարխան քաղաքի չքաւոր Հայոց համար եկեղեցական հոգաբարձութեան կանոնադրութիւնը, որը թոյլ է տալիս Նորին Սրբազնութեանը հաստատել այդպիսի հոգաբարձութիւններ վիճակի մէջ գտնուած միւս քաղաքներումն էլ:

Ահա համառօտ քաղուածք այդ կանոնադրութիւնից:

Աժդարխանում եկեղեցական հոգաբարձութիւնը չքաւորների համար հաստատւում է Աժդարխանի եկեղեցիներից մէկի մէջ:

Հոգաբարձութիւնը բաղկանալու է եօթն անդամներից, որոնցից երեքին ընտրում է Աժդարխանի Հայ ժողովուրդը երեք տարով, Մայր եկեղեցու և Պետրոսի և Պօղոսի եկեղեցիների երեցփոխներից և մէկ եկեղեցականից առաջնորդի ընտրութեամբ:

Հոգաբարձութեան պարտաւորութիւնն է՝ ա). գտնել միջոցներ Աժդարխանում եկեղեցիների մօտ ծխական ուսումնարաններ, աղքատանոցներ և այլ մարդասիրական հաստատութիւններ հիմնելու, որոնց կառավարութիւնը հոգաբարձութեան վերայ է և բ). կարևոր դիպուածներում հընարաւոր օգնութիւն հասցնել չքաւորներին:

Հոգաբարձութեան գործակատարութիւնների համար դրամական միջոցներն են՝ ա). Աժդարխանում չքաւոր Հայերին օգնելու համար եղած դրամագլուխը. բ). մարդասիրական նպատակով կտակած գումարներն ու կալուածքները և գ). կամաւոր տուրքերը, որ կը ժողովուին կամ եկեղեցիներում տափերով, կամ ստորագրութեամբ և կամ Աժդարխանից դուրս առաջնորդի տուած մատեաններով:

Հոգաբարձութիւնը իւրաքանչիւր տարուան վերջին պարտաւոր է հաշիւ տալ իւր ամեն գործողութիւնների մէջ Աժդարխանի Հայոց եկեղեցիների ժողովրդականների ընդհանուր ժողովին:

ՄԵԾ - ՇՈՒԼԱՒԵՐ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի):

Մեծ Շուլաւէրը մի անբաւականացուցիչ ուսումնարանով ի վաղուց անտի զգալով իւր մտաւոր յառաջադիմութեան կարօտութիւնը՝ մինչև հիմա չէր կարողանում ինքնին օգնել իւր անձին: Բայց շնորհիւ մեր վեհ. Հայրապետի ընդհանրական կարգադրութեան՝ այցելութիւն անելով առ մեզ Թեմական վերատեսուչ արժանապատիւ Ստեփաննոս քահանայն Տէր Ստեփաննոսեանց, ամսոյս 20-ին կիւրակէ երեկոյեան ժամերգութեան ժամանակ իւր ազդու և համոզողական ատենաբանութեամբ յայտնեց ուսման ամենակարևորութիւնը և իւր այցելութեան բարձր նպատակը և ժամի աւարտման բոլոր ժողովրդը հանդերձ քահանայիւք հրաւիրելով տեղւոյս ուսումնարանը և այնտեղ ևս յայտնելով ժողովրդեանը դէպի իւրեանց որդիք ունեցած յատուկ պարտականութիւնները, պարտաւորեց ամենին ուսումնարանի մշտական և յառաջադէմ շարունակութեան մասնակցել կամաւոր նուիրատուութեամբ:

Նոյնպէս և նոյն ուսումնարանի տեսուչ Պօղոս Աւագ քահանայն Խանկեանց Թեմական վերատեսչի լուսաւոր նպատակին վերաբերութեամբ խօսելով քանի մի արժանաւոր խօսք և (շնորհակալութիւն մատուցանելով) յիշելով պ. Նաւլիբեանցի մինչև օրս նորանից վերայ ունեցած մեծ երախտիքը, իբրև բարի օրինակ ժողովրդականաց յօգուտ պահպանութեան ուսումնարանի ընծայեց հարիւր ռուբլի՝ որոյ և հետևեցին այլ քահանայք և ժողովրդականք, ուր որ ժողովեցաւ մինչև 2515 ռուբլի Այսպէս գերապատիւ վերատեսուչը իւր այցելութեամբը մի նոր շունչ և հոգի փչելով մեր ժողովրդեան սառնացեալ սրտերի մէջ, գոգցես կենդանացրեց մեռելութիւնից:

Ի վերջոյ այս նուիրատուութեան ցուցակը յանձնելով յիշեալ Պօղոս աւագ քահանային և գործակատարին տեղւոյս, պատուիրեց աշխատել և հետզհետէ աւելացնել թէ նուիրատուաց և թէ նուիրանաց Թիւը մինչև իւր վերադառնալն և ուսումնարանի տնտեսական և ուսումնական մասների. հոգալն և հոգաբարձուաց և ուսուցչաց նշանակելն:

Ուստի ի պատճառս մեր և միւս Ազգայնոց խրախուսութեան առայժմ խնդրեմ ընդունել Ձեր ………… լրագրի էջերումը սորա հետ և մինչ ցայժմ եղած նուիրատուաց ցուցակը:

Ի. Գ. Ս.

ԱՆՈՒԱՆՔ ԵՒ ԱԶԳԱՆՈՒԱՆՔ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ ՅՕԳՈՒՏ
Շուլաւերու ծխական ուսումնարանի:

Պօղոս աւագ քահանայ Խանկեանց ընծայեաց 100 ռուբ. Գէորգ քահանայ Մելքիսեդեկեանց — 50 ռ. Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց — 50 ռ. Իսահակ քահանայ Իսահակեանց — 30 ռ. Մովսէս քահանայ Տէր Գրիգորեանց — 30 ռ. Ազնիւ Միրզայ Բալանթարեանց — 50 ռ, Ազնիւ Գրիգոր Բալանթարեանց — 100 ռ. Ազնիւ Գաբրիէլ Բալանթարեանց — 50 ռ. Ազնիւ Աղէքսանդր և Սարգիս Մելիք Սարգսեանց — 100 ռ. Ազնիւ Եգոր Բեստաւնեանց — 50 ռ. Յակոբ Մաճկալեանց — 90 ռ. Մովսէս Ղարամեանց — 200 ռ. Գրիգոր Նալբանդեանց — 50 ռ. Յարութիւն Մելիքսեանց 50 ռ. Բաղալի Յարութիւնեանց 60 ռ. Օհանջան Երիբեկեանց — 50 ռ. Աւետիք Մելիք-Ադամեանց — 50 ռ. Վարդան Յարութիւնեանց — 100 ռ. Մկրտիչ Մեհրաբեանց — 120 ռ. Պետրոս Մեհրաբեանց — 80 ռ. Գէորգ Միրզոյեանց — 100 ռուբ. Աւետիք Բամալեանց — 100 ռ. Սողոմոն Դալլաքեանց — 20 ռ. Սարգիս Ջանկինեանց — 10 ռ. Յովհաննէս Միրաքեանց — 20 ռ. Միխակ Պապաշարեանց — 20 ռ. Տանուտէր Մովսէս Մաթէոսեանց — 20 ռուբ. Բեկլար Նաղիբեանց — 30 ռ. Մելքիսեթ Խաչատեանց — 30 ռ. Յակոբ Թամրազեանց — 20 ռ. Փաշայ Մարութեանց — 30 ռ. Բէկլար Սարիբեկեանց — 30 ռ. Յովհաննէս Եսայեան Ստեփանեանց — 50 ռ. Օսէփ Թամրազեանց — 30 ռ. Մակրտում Նարիմեանց — 10 ռ. Սարգիս Աւետիսեանց — 20 ռ. Անդրէաս Տէր Սիմէօնեանց — 20 ռ. Ստեփան Ղարաչեանց — 50 ռ. Աւէտիք Կարապետեանց — 40 ռ. Աւէտիք Յովակիմեանց — 30 ռ. Յովհաննէս տէր Գրիգորեանց — 10 ռ. Արամ Շահինեանց — 20 ռ. Աղաբէկ Միրաքեանց — 20 ռուբ. Գէորգ Թամրազեանց — 20 ռ. Յովհաննէս Զարգարեանց — 20 ռ. Մինաս Դալըստեանց — 20 ռ. Յարութիւն Առաքեանց — 20 ռուբ. Յարութիւն Թանեանց — 30 ռ. Բէկլար Դուլեանց — 50 ռ. Մելքիսեթ Միրաքեանց — 10 ռ. Մելքիսեթ Բոխոնեան Միրաքեանց — 10 ռ. Սիմէօն Կարապետեանց — 15 ռ. Բարսեղ Դալլաքեանց — 15 ռ. Աղաջան Զիրքինեանց — 20 ռ. Պետրոս Միրաքեանց — 20 ռ. Յարութիւն Բուզախեանց — 30 ռ. Յովսէփ Խրիմեանց — 5 ռ. Գրիգոր Նաղիբեանց — 50 ռ. Դարչին Թեւանեան — 30 ռ. Արութին և Աւէտիք Պետրոսեանց — 20 ռ. Օհաննէս Մանուչարեանց — 10 ռ. Ալլահվերդի Բաղեանց — 10 ռ. Բեգլար Միքիեանց — 20 ռ. ընդամէնը 2515 ռ.

Նորին Օծութիւն վեհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց կոնդակով ի 23-էն անցեալ հոկտեմբերի ամսոյ համարաւ 408 նշանակել է Մողնու աւագ քահանայ արժանապատիւ Հայր Ստեփաննոս Մանդինեանցին քննիչ Հայերէն կրօնական գրքերի և յօդուածների, որոնք կը յանձնուին Նորին արժանապատուութեան տեղւոյս Գրաքննական Կոմիտէին: Իսկ այդ շարադրութիւնների տպագրութեան մասին վճռական թոյլտուութիւնը պէտք է ստանալ նոյն իսկ Գրաքննական կոմիտէից:

—

Պ. Նոր Արմէնը հաղորդում է մեզ Աժդարխանից.

Ուրախութեամբ սրտի յայտնում ենք, որ Մոզդոկի Հայոց ուսումնարանը իւր ներկայ դրութեամբ լաւ յուսոյ է խոստանում: Աշակերտքն ուսանում են նոր ու հնչա միտօդով, և բարոյական յառաջադիմութիւն են գործում մայրենի լեզուի մէջ: Միևնոյն ուսումնարանի մի սենեակում զետեղուած է մի փոքրիկ արհեստանոց կօշկակարութեան, ուր առաջնակարգ աշակերտքը դասատուութիւնից ազատ ժամանակ պարապում են: Այսպիսի նախանձելի կարգապահութեան պատիւը վերաբերւում է հասարակութեանն և առաւելապէս պատուելի ուսուցչին (պ. Յովհաննէս Տէր-Գրիգորեանց), որ իւր աշակերտների զարգացման գործը յառաջ է տանում գեղեցիկ ջերմեռանդութեամբ: Կարծեմ մեզ Աժդարխանեցիներիս էլ ժամանակ է խոր ուշադրութիւն դարձնել մեր ուսումնարանների վերայ արժանաւոր ուսուցիչների պատրաստութեամբ, մինչդեռ շատ փոքր ու շատ աղքատ հասարակութիւնք գերազանցում են մեզ այս հանդէսի մէջ:

—Թէ որքան ճշմարիտ է, մեզ յայտնի չէ: Ասում են, որ տեղական Հայոց աւագ եկեղեցւոյ երեսփոխանը կամենում է հրաժարուել այդ պաշտօնից, ցանկալի էր, որ նոյնպիսի արժանաւոր ու գործունեայ երեսփոխան ընտրուէր նորա փոխանակ:

—

Երևանից մեզ հաղորդում է պ. Շաւարշը. 1873 թուին կազմուած «Արարատեան» անունով ընկերութիւնը, որ բաղկանում էր 100 անդամներից և ունէր մօտ 8 հազար մանէթ դրամագլուխ մի քանի ամիս յետոյ լուծուեցաւ մի քանի պարոնների շնորհիւ: Այժմ այդ ընկերութիւնը նորից սկսում է կազմուել և արդէն ունի 10 անդամ:

—

Մեզ հաղորդում են, որ կ. Պօլսում խաղացել են Հայերէն լեզուով մի ամբողջ օպերայ:

—

Խմբագրութիւնս ստացաւ «Հայկական Աշխարհի» 4 և 5 դ համարները. այնինչ 2—3 համարները նորա ձեռքը դեռ չեն հասած:

—

Պարոն Հօր-Հէրը մեզ Կողբից հաղորդում է, որ այնտեղի ուսումնարան հիմնելու գործն օրէօր յետ է ընկնում, մօտ օրերումս այդ անհրաժեշտ հարցը այնտեղի արժանապատիւ Յովսէփ քահանայ Տէր-Յարութիւնեանցն կրկնել է. հին ստորագրութիւնը առաջ բերելով մի քանի ժողովրդից ստորագրել տուել է և տալիս է, բայց պարոն Թղթակիցը կարծում է, որ այս անգամն էլ միևնոյն հետևանքն կունենայ, ինչ որ ունեցել է անցեալ տարիներում:

Նոյն Թղթակիցը հաղորդում է, որ Կողբի հոգաբարձութիւնը հրաւիրեց Աղէքսանդրապօլից պ. Ս. Արարաջեանցին ուսուցիչ իրանց ծխական դպրոցի համար: Այս պատճառով պարոնը շնորհակալում է Կողբի նոր երեսփոխաններին, որ սոքա կարողացան հասնել իւրեանց նպատակներին:

—

Գորդմանից մեզ գրում է պ. Խորխոռունին, որ այնտեղի Թատրոնի գործը երկու տարի է մի քանի երիտասարդների շնորհիւ յետին չնչաւութեան մէջ է գտնուած և թատրոնապատկան իրեղէնները բոլորը փչացել են արդէն:

Առաջին անգամ չէ, որ մենք լսում ենք այս դանդաղ և միթէ մինչև այժմ ոչ ոք չը գտնուեցաւ, որ վերականգնէր այնտեղի թատրոնի գործը:

ՆԵՐՔԻՆ

Թիֆլիսի քաղաքային ապագայ վարչութեան անդամների ընտրութեան մասին արդէն արած են կարգադրութիւններ: Ընտրութեան իրաւունք ունեցողներին բաժանած են հրաւիրագիր և մի ցուցակագիր, ուր պէտք է իւրաքանչիւր ոք նշանակէ

պարէցը 1567 Թուին հրաման տալով, որ բոլոր տէրութեան ներքին մաքսատներում ոչ մի տեղ Հայերից մաքս չառնեն:

Լեհաստանի Հայերի, ինչպէս և առհասարակ բոլոր գաղթական Հայերի վիճակը սկզբում միշտ նոյնպէս ապահով և նախանձելի է եղել. ինչպէս վերևը բերած տեղեկութիւններից դիտելի է, ազգային կացութեան արտաքին կողմը միանգամայն անմատչելի մնացել և ապահովուել է տէրութեան կողմից զանազան նոր արտօնագրերով հին սովորութիւնների և աւանդութիւնների նուիրագործութեամբ և այլն: Հայը, որ ժամանակի բերմունքից Թողնում, փախչում է իւր աւերեալ հայրենիքից ուրիշ շէն հայրենիք գտնելու, մուտք է գործում մի այնպիսի երկիր, ուր նորան գնահատում են, ուր նորա հին օրէնքները վերահաստատում, տալիս են իրեն, որ նորանով կառավարուի, ուր նորան այդ նոր հայրենիքի հետ սերտ կապելու համար գերազանց արտօնութիւններ էլ են տալիս և այլն. և այդ իսկ հոյակապ ու ճոխ առանձնաշնորհութիւններով պերճացած Հայը ամրացնելով իւր կապերը այդ շահերի ու նպատակների հետ, կամ աւելի ճիշդ ասած, նոր հայրենիքի ժամանակաւոր պարգևների հետ, ընկնում է օտարոտի ազդեցութեան տակ և հետզհետէ խզում է իւր կապը ազգային գոյութեան գլխաւոր նշանների հետ, որի ապացոյց են հետևեալ խօսքերը, որ ասած են նոյն Լեհերէն գրուածքում. «Հայերն, ասած է այնտեղ, ԺԶ-րդ դարու երկրորդ կիսաքաժնում ընդունեցին Լեհ սովորութիւններ և հագուստ. Լեհ բարբառն ընդհանրացաւ նրանց սովորական գործածութեանց մէջ և դատարաններում. իսկ եկեղեցական արարողութիւնների մէջ առաջուայ նման մնաց Հայ բարբառը, բայց վերջինն էլ ծիսակետների և ցեանների ազդեցութեամբ, որոնք Հայ ուսումնարանները կառավարում էին, փոքր ժամանակից յետոյ եկեղեցական պաշտամունքի մէջ գործածական լինելուց դադար առաւ: Քանի սերտ էին կապվում Հայերը լատինական ծիսակատարութիւնների հետ, այնքան աւելի ընտելանում էին տեղական լեզուին, մոռանալով իրենց հարազատը: Արևելեան Հայերի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնները հետզհետէ դադարեցան, նոր տեղական ժողովրդի հետ աւելի սերտ կապող յարաբերութիւններ յառաջացան: Նմանապէս էլ եկեղեցական դասը սկսաւ իրեն կոչմանը պիտանի գիտութիւններ Լատին գրքերով ուսումնասիրել և ընդհանրապէս գիտութեան յառաջադիմութիւնն ուրիշ լեզուների ծանօթութիւն էր պահանջում, որին և հետևում էին ջերմեռանդութեամբ իրենց սեպհական մայրենի լեզուն մեկուսի թողած: Այսպիսով Հայերէնի կիրառութիւնը դադարեց և Գալիցիայում գերմանական վարժարանների հաստատուելովը ու Հայոց եկեղեցիների մօտ գտնուող ուսումնարանների փակուելովը, նա գրեթէ բոլորովին անհետացաւ»: Այստեղ որքան որ ցաւալի է երևում մեզ Հայերի այդ տեսակ վախճան գտնելը, այնքան աւելի հետաքրքրելի է գիտենալ այդ կորուստների բուն պատճառը, որն 'ի հարկէ պատմիչների գրչից պիտի սպասենք մի օր. միթէ յիրաւի այն Հայերը, որոնց համար ոչ գանձն էր պակաս, ոչ ճոխութիւնը և ոչ էլ յաջողութիւնը, որոնք ամեն ինչ ունեին իբրև մարդկային ընկերութեան անդամ, չունէին հնար իրենց ազգութեան ճրագը մըշտավառ պահելու այն տեղում, ուր ուրիշ շատ գովելի յիշատակներ են թողած են օտարի համար. միթէ նրանց գանձերը չը գանձուեցան այնպիսի տեղում, ուր «ոչ ցեց մերձենայ և ոչ գող ապականէ»: Հասարակաց տեղեկութիւնները պատմութեան էջերում ոչ մի մխիթարիչ և գոհացուցիչ պատասխան չեն տալիս մեզ այդ հարցերի դէմ: Մենք կարդում ենք օրինակի համար, թէ Հայերը վաճառականութեան մէջ շատ յաջողակ են եղել և Լեհաստանի ազգերի մէջ ամենից ընդունակը այդ գործին, թէ այդ յաջող վաճառականութեան գլխաւոր պատճառներից մէկ էլ այն է եղել, որ նրանք սիրել են առհասարակ դիտութիւն և խոյս չեն տուել ուսումով և կրթութեամբ զարգացնել իրենց ճաշակը: Նմանապէս յիշւում է, որ մի քանի ձեռագրեր, որոնք Լվովի Դոմինիկեան դրադարանի մէջ պահվում են, ուղղակի ցոյց են տալիս, որ հին Հայ եկեղեցականները եռանդով հետևած են եղել գիտութիւններին: Բայց ոչ մի տեղ չենք կարդում, որ այդ իսկ Հայերը տնտեսական և քաղաքական յաջողակ պայմանների մէջ գոլով հաստատած լինին մի տեղ մի մշտընջենաւորապէս ապահոված ազգային ուսումնարան կամ վանք, և պարտաւորեցրած լինին իրենց զաւակներին, իրենց մատաղ սերունդը, այդ ուսումնարանում կրթուելու Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութեան ոգով: Մի կողմից յիրաւի թագաւորները նորանց իրաւունք էին շնորհում մայրենի եկեղեցին ազատ պաշտելու, միւս կողմից միաբանութեան առաքեալները Հռոմի քահանայապետի ուղարկած նոր զօրք էին տանում մեր եկեղեցւոյ հօտից. և այն համարին, «Համաձայնք և համակրօն պաշտօնականների մէջ մենք տեսնում ենք կրօնական երկուութիւն, մի մասը Լուսաւորչի, միւս մասը Հռոմի քահանայապետի հովանաւորութեան տակ և ի վերջոյ կաթոլիկական զօրութիւնն էլ յաղթանակ տարած ենք տեսնում վերջին միաբանութեան ժամանակ, որ գործադրեցաւ Նիկոլ Թորոսովիչ անունով Հայ եպիսկոպոսի ձեռամբ, և այսպէս բոլոր Լեհաստանի Հայերը ենթարկուեցան Հռոմի քահանայապետի իշխանութեան:

Այդ վերջին միաւորութիւնից յետ այն զօրեղ և եռանդուն կապը, որով Լեհաստանի Հայերը շաղկապուած էին ընդհանուր Հայ ազգութեան և նորա ներկայացուցիչ ընդհանրական Հայրապետի գահի հետ, բոլորովին խզուեցաւ, դաւանական սկզբունքների պատրուակով կաթոլիկ կղերը կարճ միջոցում արմատահան արաւ մեր Հայերի միջից ազգային միութեան այն սկզբունքը, որ մեր հարազատ եկեղեցու յատկանիշն էր և պարտաւորեցնում է նորա հաւատացեալներին կրօնի և Աստուածպաշտութեան անունով համազգային միութեան աւանդը անմատչելի պահել և անփոփոխելի Հայաստանեայց եկեղեցու ծոցում: Հայերը, որ կենցաղական պայմանների ներսից իրենց հընաւանդ սովորութիւնները Թողել էին, իրեն մայրենի լեզուն աղճատել և գրեթէ մոռացել էին արել իրենց միջից, իրենց առաջիկայ յարաբերութիւնը ար Արևելեան Հայերի հետ գրեթէ բոլորովին դադարեցրել էին, կաթոլիկութիւն ընդունելով, կորցրին միանգամայն իրենց հայութեան վերջին նշանն ևս, զրկուեցան ընտրողական իրաւունքներից, ժողովրդական միակ հաւատարիմ հովատարներից, այսինքն Հայաստանեայց եկեղեցու ուղիղ ընտրուած քահանաներից և եկեղեցականներից, որով իրենց ազգային հարազատ կրթութեան վերայ հոգացողները չքացան, ամեն ինչ անցաւ կաթոլիկ կղերի ձեռքը: Ճիզուիթական կղերի խաղամոլքն էր այնուհետև նորա առաջնորդութեան կամ ժողովրդական գործերի մասին պատասխանատուն. այն խճճուածքը, որի առաջ դաւանութիւնը, կենսական գիտողութիւնները, ժողովրդի սրտաճմլիկ թշուառութիւնը, նորածին մանուկների օրերով ու ամիսներով անկնունք մնալը, ննջեցեալների անթաղ ու անօրհնէնք Թողնելը միանգամայն խաղալիք ու թեթև բաներ են համարւում, եթէ այդ ամենը նորա կամքին հակառակ գործողութիւններ են պահանջում: Իբրև այս խօսքերիս ապացոյց բաւական է, որ մտաբերենք յիշեալ Թորոսովիչ եպիսկոպոսի հնարած անկարգութիւններն և նրանց վախճանը:

(Կը շարունակուի):

24 անձանց անունները, որոնց նա կամենում է ընտրել ապագայ վարչութեան անդամ: Այս ցուցակագիրը իւրաքանչիւր ընտրող պէտք է ստորագրէ և կնքած ներկայացնէ քաղաքագլխին ընտրութիւնից երեք օր առաջ:

Խմբագրութեանս մի քանիսը դիմել են հարցով, թէ այդպիսի մի ընտրողական միջոց յարմարաւո՞ր և նպատակաւոր է և չէ՞ հակառակում արդեօք քաղաքային վարչութեան նոր կանոնադրութեան 31 յօդուածին, ուր առաջարկւում է ընտրել անդամներին գաղտնի քուէարկութեամբ:

Այն սկզբունքը, որը հիման վրայ կարծում են յիշեալ անձինք, թէ առաւել լաւ կլինէր ընտրել անդամներին գաղտնի քուէարկութեամբ, բոլորովին յարգելի է: Այդ անձինք հիմնւում են յիշեալ յօդուածի նուրբ բնրած ծանօթութեան վրայ, թէ գաղտնի քուէարկութիւնը պէտք է գերադանց համարել բաց ընտրութիւնից, որովհետև քաղաքացիներից շատերը կդժուարանան համարձակ ձայն տալ:

Եթէ քաղաքային վարչութիւնն իւր ներկայ կարգադրութիւնն արել է կանդիդատների ցուցակ կազմելը թեթևացնելու համար, կարող էր ժողովի օրը բաժանել թղթեր առանց որևիցէ համարի և նշանի, և սրանց վրայ իւրաքանչիւր ընտրող նշանակելով 24 անձանց անուն տար քաղաքագլխին: Այսպէս ամեն մարդ իւր ցանկացած անձանց անունները տուած կը լինէր և իւր անունը ծածուկ պահած, այն ինչ այժմ շատերը չը կարողանալով իւրեանց անունը ծածուկ պահել, սխալված պիտի լինին կամ ակամայից հրաժարվել իրանց իրաւունքից և կամ տալ այնպիսեաց անունները, որոնց դուցէ չէին կամենում ընտրել: Բայց սրանից արդեօք ներկայ կարգադրութիւնը չէ՞ տալ միջոց և շատ կարող մարդոց ներգործելու շատերի վրայ յօգուտ իւրեանց կամքի և ցանկացածի: Մենք կարծում ենք, որ այս բոլոր դէպքերի առաջն առնել չաշխատելը նշանակում է մեղանչել վերյիշեալ 31 յօդուածի մտքի դէմ:

ՊԱՐՈՆ ԽՄԲԱԳԻՐ

Այս օրերումս ես ստացայ հրաւէր Թիֆլիսի քաղաքագլխից ներկայ լինելու քաղաքային ընտրութեանց: Հրաւիրաթղթի հետ ուղարկած էր ցուցակագիր, որի մէջ նշանակած էր այն համարը, որով նշանակած եմ ընտրողական ցուցակում: Ինձ առաջարկվում է այդ ցուցակագրի վրայ նշանակել 24 ընտրելիների անունները և ստորագրել իմ ազգանունը:

1870 թուականի քաղաքային կանոնադրութիւնը իւր 31 յօդուածում ասում է. ընտրութիւնները լինում են գաղտնի քուէարկութեամբ......

Խելացի օրէնքը նախագուշակել է, որ յայտնի քուէարկութիւնը կարող է քայքայել քաղաքացիների մասնաւոր յարաբերութիւններն և յառաջացնել նոցա համար անախորժ հետևանքներ, այնինչ ընտրելիներ առաջարկելու այդ ձևը, որ մտցրած է Թիֆլիսում և յայտնի չէ թէ ում կարգադրութեամբ, ընդդէմ է այդ օրէնքին: Այդ հանգամանքը ինձ շատ դժուարութեան մէջ է դնում. բառ որում ես գտանվում եմ այնպիսի դրութեան մէջ, որ ես չէի ցանկանալ, որ ուրիշը իմանար, թէ ես ում եմ առաջարկել կանդիդատ և ում չեմ առաջարկել: Ես շատ մտածեցի, թէ ինչպէս այդ բանի առաջն առնեմ, բայց անկարելի եղաւ. կարծես բոլորը նախագուշակած էր: Մտածեցի չը ստորագրել, բայց ցուցակագրի համարը ցոյց կըտար իմ ազգանունը գրքի մէջ, մտածեցի համարը կտրել, բայց դուցէ գաղտնի տար իմ առաջարկած ընտրելիներան աղօրինի համարել կամ եթէ միայն իմ և դուցէ մի քանիսի ցուցակագրերը լինէին առանց համարի այն ժամանակ ես կիմանային թէ ովքեր են այդ անձինքը.......

Ինչ էր մնում անել ինձ, որ չը զրկուէի մի քանի մերձաւորներիս բարեկամութիւնից կամ մինչև անգամ մի կտոր հացից: Մնում էր միայն հրաժարվել այն իրաւունքից, որ տալիս է ինձ օրէնքը և չըկատարել իմ քաղաքացիութեան պարտականութիւնը:

Եթէ միայն ես լինէի այդ դրութեան մէջ, այդ ասելուս մեծ կորուստ չէր լինել, բայց կասկած չկայ, որ շատ շատերն են գտանվում այդ անել դրութեան մէջ: Ես կասեմ, որ այդ կարգը բոլոր ընտրողներին ձգում է անախորժ դրութեան մէջ:

Ուստի համարձակվում եմ խնդրել պ. խմբագիր, տեղի տալ այս տողերին ձեր լրագրի մէջ, յուսալով, որ նոքա, որոնք մտցրել են այդ կարգը, հասկանան, որ դա շատ անյարմար է, իսկ եթէ այդ կարգը որոշած է օրէնքով, գոնէ նոքա ցոյց կըտան այն յօդուածն և այդպիսով կազատեն տարակուսութեանց առաջը:

Թիֆլիզի քաղաքացի:

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Թիֆլիսի քաղաքագլուխ իւրեան թուղթանեանը ուղղել էր քաղաքիս ամեն ընտրողներին հրաւիրաթուղթ, որոյ մէջ տպագրած էին և քաղաքային վարչութեան կանոնադրութեան մի քանի աւելի կարևոր յօդուածներն, որ ընտրողները հարկաւորութիւն չունենան նոյն կանոնադրութիւնը քրքրելու և ընտրութեան ժամանակ սխալներ չը գործեն: Ես համակրելով այս մտքին և կամենալով նպաստել այդ գործին, արժան համարեցի այդ յօդուածներն թարգմանել հայերէն (որովհետև ամեն ընտրողներն էլ ռուսագէտ չեն) և իմ կողմից էլ աւելացրի մի քանի յօդուածներ, որոնք իմ կարծիքով նոյնպէս շատ կարևոր էին ընտրողներին գիտենալ: Այս յօդուածների թարգմանութիւնը ուղարկում եմ խմբագրութեանդ և խնդրում եմ, որ բարեհաճիք տպել նորանց ձեր լրագրի մէջ:

Մի ընտրող.

ՀՐԱՒԻՐԱԹՂԹԻ ՄԷՋ ՏՊԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ:

ՅՕԴՈՒԱԾ 20.

Կինամարդների, բացականների և քաղաքականապէս չափահասների (21 տարեկան) փոխարէն, բայց որոնք չունին 17 յօդուածի պահանջած հասակը, կարող են մասնակցել ընտրութեանց այնպիսի անձինք, որոնք կը ստանան նրանցից հաւատարմագրով — իսկ մանկահասների և անչափահասների փոխարէն կարող են մասնակցել ընտրութեանց խնամակալներն ու հոգաբարձուներն, եթէ իրեն հաւատարմատարներ կամ խնամակալներ և հոգաբարձուներ ունին այն պայմանները, որոնք պահանջում է 17 յօդուածը քաղաքային ընտրութեանց մասնակցելու համար. և եթէ նոքա այս ընտրութեանց իրաւունքի վերաբերութեամբ ենթարկուած չեն այն արգելքներին, որոնք որոշած են 18 և 19 յօդուածներում.

Կինամարդները կարող են իւրեանց փոխարէն իրաւունք տալ մասնակցելու ընտրութեանց իւրեանց հայրերին, մարդոց, որդոց, փեսաներին և եղբայրներին, մինչև անգամ այն դէպքում, երբ հաւատարմատարները համապատասխան չեն 17 յօդուածի 3-րդ կէտի պայմաններին, եթէ միայն նոցա մասնակցութեանը քաղաքային ընտրութեանց մէջ արգելք չկայ, 18 և 19 յօդուածներով: Այս հիման վրայ անբաժան որդիք կարող են մասնակցել ընտրութեանց իրանց հայրերի փոխարէն, նոցա հաւատարմաթղթով:

Ծանօթ. Այս յօդուածում (20) յիշուած հաւատարմաթղթերը, քաղաքային ընտրութեանց մասնակցելու համար, գրվում են հասարակ թղթի վերայ: Հաւատարմաթղթի տուողի ստորագրութիւնն եթէ ծանօթ չէ քաղաքային վարչութեան, պէտք է հաստատած լինի նոտարիուսից, ուր կայ այդպիսին, կամ ոստիկանական վարչութիւնից, ուր չը կայ նոտարիուս:

21 ՅՕԴՈՒԱԾ.

Զանազան վարչութիւնք, հաստատութիւնք, հասարակութիւնք, ընկերակցութիւնք, նոյնպէս և վանքեր ու եկեղեցիք, եթէ ունին քաղաքում անշարժ կալուածներ, որոնցից յօգուտ քաղաքին առնվում է հարկ կամ որոնք տալիս են յօգուտ քաղաքին հարկ վկայաթղթերի առևտրի և արհեստի իրաւանց համար, (յօդ. 17) ունին ձայնի իրաւունք քաղաքային ընտրութեանց մէջ իւրեանց ներկայացուցիչներով, պահպանելով պայմանները, որոնք նշանակած են 17, 18 և 19 յօդուածներում:

23 ՅՕԴՈՒԱԾ.

Քաղաքի բնակիչներից ոչ ոք ընտրութեանց ժամանակ չէ կարող երկու ձայնից աւելի ունենալ. մինը իւրը և միւսը հաւատարմաթղթով:

32 ՅՕԴՈՒԱԾ.

Ընտրողի անձնաւորութեան հաւաստիացուցման եղանակը յանձնվում է Քաղաքագլխի հայեցողութեան: Ընտրողների, կինամարդների և բացականների, նոյնպէս հաստատութեանց ու ընկերութեանց (յօդ. 21 (հաւատարմատարները, ընտրողական ժողովին մասնակցելու համար, ստանում են իրաւունքը մասնակցելու ընտրութեանց, իւրեանց հաւատարմաթղթը քաղաքագլխին ներկայացնելու յետոյ, համաձայն ծանօթութեան 20 յօդուածի, իսկ խնամակալներն ու հոգաբարձուներն յանձնելով նրան խնամակալական հաստատութեանց հրամանաթղթերը, որոնք հաստատում են նրանց իւրեանց պաշտօնի մէջ:

ՅՕԴ. 33.

Հասակի (յօդ 17 և 2) նոյնպէս և պայմանների մասին, որոնք զրկում են ձայնի իրաւունքից (յօդ. 18), ոչ մի առանձին վկայագիր չէ պահանջվում. միայն մինչև ընտրութեանց սկսուելը կարդացվում են 17 յօդուածի 2 կէտը և 18 յօդուածը ներկայ կանոնադրութեան, բացատրելով ընտրողներին, որ ոյք հակառակ օրինաց կը մասնակցին ընտրութեանց՝ կ՚ենթարկուին պատիժներին, որոնք որոշած են 1434 յօդուած. Օրէնդ. Պատիժների վերայ (Շարունակ 1868 թ.).

ՅՕԴ. 35.

Քաղաքային խորհրդարանի իրաւասու անդամ կարող է ընտրուել իւրաքանչիւր անձն, որ ձայնի իրաւունք ունի ընտրութեանց մէջ (յօդ. 17. կէտ 1 — 3. 13, 19. 20) սոյն թվում հաշուելով և այն անձանց, որոնք ստացել են այս իրաւունքը հաւատարմաթղթով. (յօդ. 20 և 21). Ոչ քրիստոնեայ իրաւասուների թիւը չէ կարող ընդհանուր թուի մի երրորդականից աւելի լինել.

ՅՕԴ. 36.

Ամեն ժողով կամ ընտրողների դասակարգ կարող է իրաւասու ընտրել, ինչպէս իւր միջից, նոյնպէս և այն ընտրողներից, որոնք պատկանում են այլ ժողովի կամ ընտրողների դասակարգի (յօդ. 24).

ՅՕԴ. 37.

Ընտրուել կարող է ամեն ոք, որ ունի օրէնքով իրաւունք ընտրուելու իրաւասու (յօդ. 35, 36), եթէ կը յայտնէ իւր ցանկութիւնը կամ եթէ ընտրողներից ով և իցէ կառաջարկէ նորան:

ՅՕԴ. 40.

Ընտրող ժողովները չունին իրաւունք ընտրեալ իրաւասուներին ոչ մի հրահանգ տալու:

ԻՄ ԸՆՏՐԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ:

—

ՅՕԴ. 19.

Նահանգապետը, անդամք Նահանգական Ատեանի քաղաքային գործոց համար, բացի Քաղաքագլխից, Նահանգական կառավարութեան անդամք և տեղական ոստիկանական պաշտօնատարները, մինչև նոքա գտնվում են իրանց պաշտօնների մէջ, չունին ընտրութեան ժամանակ ձայնի իրաւունք, թէև ունենային նոքա դորա համար իրաւունք 17 յօդուածի զօրութեամբ:

ՅՕԴ. 30.

Ընտրողական ժողովներում նախագահ է Քաղաքագլուխը: Իւրաքանչիւր ընտրողական ժողովին տրվում է իրաւունք, ընտրութեանց սկսուելուց առաջ իւր միջից ջոկելու երկուսից մինչև վեց հոգի, որոնք կը լինին քաղաքագլխի օգնականները, ձայները հաւաքելու և հաշուելու ժամանակ:

31 ՅՕԴ.

Ընտրութիւնները լինում են գաղտնի ձայնարկութեամբ, քուէարկութեան միջոցով:

41 ՅՕԴ.

Ժողովը համարվում է կանոնաւոր, եթէ նորա մէջ ներկայ եղող ընտրողների թիւը գերազանցում է ընտրելի իրաւասուների (гласныхъ) թուին: Եթէ ժողովում այդքան ընտրողներ ներկայ չեն գտանվել, նշանակվում է, եօթն օրից ոչ վաղ, նոր ժողով, որ անում է ընտրութիւնք, որքան էլ այս անգամ լինին նորա մէջ ընտրողներ, և այս մասին ծանօթութիւն է տրվում ամենքին, որոնք ունին իրաւունք ներկայ լինելու ընտրութեանց, երբ յայտնվում է նրանց առաջիկայ նստի մասին:

45 ՅՕԴ.

Ընտրութեանց համար ընդհանրապէս դրած կարգի խանգարման դէմ գանգատները Քաղաքագլուխը, իւր մեկնաբանութեամբ, եօթն օրուայ միջոցում, ներկայացնում է Նահանգապետին, որ յանձնում է նրանց ի քննութիւն Նահանգական Ատենի, քաղաքային գործոց համար (յօդ. 11).

46 ՅՕԴ.

Եթէ գանգատները քննելիս կ՚երևի, որ ընտրութեանց ժամանակ յիրաւի պատահել են մասնաւոր անկանոնութիւնք կամ խանգարուել է ընտրութեանց համար ընդհանրապէս որոշված կարգը, Քաղաքային խորհրդարանը (յօդ. 44) կամ Նահանգական ատեանը քաղաքային գործոց համար (յօդ. 45) անում է որոշումն նոր ընտրութիւններ անելու մասին, անվաւեր ճանաչուած ընտրութեանց փոխարէն:

Այս տարի կայացաւ Բարձրագոյն հրաման, որով Ռուսաստանի մէջ եղած աղանդաւորներին իրաւունք է տրվում ունենալ և վարել ծննդական վկայականներ:

—

Ընթերցողներիս յայտնի է, որ պ. Թամամշեանի քարվանսարայի հրդեհի պատճառաւ մեղադրվում է դուքճեանցի պ. Լազարեվը: Պարոն Լազարեվին դատարանի առաջ պաշտպանելու առաջարկած է դատարանի կողմից երդուեալ փաստաբան իշխան Ամատունին: Գործը նշանակուած է ամսոյս 18-ին:

—

«Тиф. Вѣст.» լրագիրը լսել է, որ առաջիկայ տարուց վրայ «Դրօշակ» լրագիրը շաբաթը երեք անգամ կը հրատարակուի:

Ամենայն յաջողութիւն ենք ցանկանում «Դրօշակի» խմբագրութեանը այդ նոր ձեռնարկութեան մէջ:

—

Ռոստով-Վլադիկավկազի երկաթուղին վերջանալու է առաջիկայ գարնան յոյս կայ, որ կըսկսուի երթևեկութիւն: Ասում են, թէ Վլադիկավկազից մինչև Թիֆլիս երկաթուղու շինելու նախագիծը պատրաստ է և թէ նորերումս իշխան Միրսկին տարել է Պետերբուրգ հաստատելու:

—

Քութայիսի նահանգը, մինչև այժմ ունէր զինուորական նահանգապետ. այսուհետև նորա կառավարութիւնը լինելու է քաղաքական: Նահանգապետ նշանակուեցաւ պ. Վլասսովը:

—

Պետերբուրգի բժշկական ճեմարանի երկրորդ դասարանի ուսանողները դժգոհ լինելով ուսուցչապետ Ցիօնից, նորա դասախօսութեան ժամանակ յայտնել են նորան իւրեանց անբաւականութիւնը սուլելով: Այս առթիւ ճեմարանի երկրորդ դասարանը փակել են:

—

Վրաց «Դրօշակ» լրագրի մէջ կարդում ենք, որ Պարսից Շահը իւր անցեալ տարուայ Եւրոպայում ճանապարհորդութիւնը գրել է և տպել է ֆրանսերէն:

—

Պ. Նոր Արմենը հաղորդում է Աժդարխանից.

—Ձմրան թատրոնի բացվելու հետ սկսուեցան և զւարճախաղերը, առաջինն (Թատրոնի) դերասանական խմբին գործակից է մի Հայ Թումանեկի (ոպէս ասում են Թիֆլիսեցի), իսկ վերջին հիւրերի մէջ չերմեռանդ աշխատում է մի կարճահասակ Հայ աղջիկ տիրօլեան չորերով......

—Ամսոյս վերջին օրերում առատ ձիւնախառն անձրև տեղաց Աժդարխանը, և նորան հետևեց բաւական ցուրտ եղանակ: Շոգենաւերը կատարում են իւրեանց վերջին ընթացքը, ծովային նաւագնացութիւնը վերջանում է առաջիկայ եօթնեակում:

—

Պ. Հոր Հերը մեզ հաղորդում է Կողբից, որ այս ամառը շատ տարածուած էր այդ գիւղում ջերմախտ, համարեա իւրաքանչիւր տանը, իսկ այնուհետև այդ ախտին յաջորդեց աչքացաւը և հարբուխ ասած հիւանդութիւնը: Ժողովուրդը կարծում է, որ այդ յառաջացած է այս ամառուան երաշտութիւնից, որ համարեա թէ յունիսից մինչև նոյեմբերի 10-ը մի կանոնաւոր անձրև չէր տեսած:

Նոյն պարոնը հաղորդում է, որ ամսոյս 17 ից մինչև 22-ն գիւղս Կողբի բնակիչներն արեգակի երես չեն տեսած, ամպ և անձրև է, որպիսին մեծ օգուտ ունի այնտեղի արտերին:

—

Թիֆլիսում այս օրերումս մի Շուշեցի երիտասարդ իւր տիրոջից փող ստանալով ապրանք գնելու համար, գնում է և թղթախաղով տանուլ է տալիս այդ փողը: Երիտասարդը յուսահատութիւնից դանակով վիրաւորում է իւրեան: Ողորմելուն խոցոտ տանում են հիւանդանոց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱ

Հռովմից ֆրանսիական Journal des Débats գարիբալդու մասին գրում են, որ նա հասել է յետին չքաւորութեան: Թէև Գարիբալդու կեանքը Կապրէրա կղզու վերայ շատ չափաւոր էր, սակայն նորա որդին իւր անմտութեան պատճառով մեծ պարտքեր էր արել տալով մուրհակներ իւր ծերունի հօր անունով: Այս պարտքերը հատուցանելու համար Գարիբալդին ստիպվեցաւ ծախել Սուտերլենդի դուքսի ընծայած նաւը, որ գնեց ուրիշ անունով ինքն Վիկտոր Էմմանուէլ թագաւորը 80,000 ֆրանկի: Դժբաղդաբար Գարիբալդին յանձնեց այդ փողերը ստանալ մի այնպիսի խարդախ մարդու, որ ստանալով փողերը փախաւ Ամերիկա: Ցաւահատեալ Գարիբալդին գրաւ դրեց բանկում իւր միակ սեփականութիւնը՝ Կապրէրա կղզին: Այսպիսով հռչակաւոր ազատասէրը ընկաւ չքաւորութեան մէջ: Նիւ-Եօրքի լրագրերից յայտնվեցաւ, որ մի քանի Ամերիկացիք առաջարկել են դրամական օժանդակութիւն, որ և ընդունել էր Գարիբալդին: Յայտնի է, որ Գարիբալդին հրաժարվել էր կառավարութիւնից նպաստ ընդունելու: Այս տեղեկութիւններն առիթ են տալիս կառավարութեան առաջարկել երեսփոխանաց ժողովին նշանակել Գարիբալդուն թոշակ, որից նա հրաժարվելու չէ 'ի հարկէ: Սպասում են, որ Գարիբալդին կընտրվի երեսփոխան Հռովմի ընտրողական ժողովներից մինում:

—Նեապօլ քաղաքի քաղաքային վարչութիւնը նշանակեց Գարիբալդուն տարեկան 3000 լիրա, իսկ Մինէրվինոյի հասարակութիւնը 300 լիրա:

ՏԱՃԿԱՍՏԱՆ

—Կ. Պօլիս. Օտար տէրութեանց հետ առանց Բ. Դրան հարցնելու առևտրական դաշնադրութիւնք կապելու իրաւունքը, որ ձգտում են ստանալ Տաճկաստանի հպատակ և հարկատու իշխանները, օրաւուր հարց է դառել այժմ Ռումինիայի վերաբերութեամբ: Այս առթիւ Ռուսաց դեսպան Ժեներալ Իգնատիևը հրաւիրել էր իւր մօտ Գերմանիայի, Աւստրիայի և Անգլիայի դեսպաններին խորհրդակցելու համար: Վերջինը չէր ընդունել հրաւէրը: Մնացածները համաձայնել են, որ Ռումինիայի անկախական դրութիւնը պահանջում է, որ այդ դաշնագրութիւնք կապէ օտար տէրութեանց հետ, որովհետև Տաճկաստանի կապած դաշնագրութիւնները գործադրելի չեն կարող համարվել Ռումինիայի համար: Այս հանգամանքը չէ մերժում և Տաճկաց կառավարութիւնը: Բ. Դուռը կամենում է միայն, որ Ռումինիայի իշխանը ամեն մի դէպքում առանձին թոյլտուութիւն խնդրէ իւրեանից, կամ մասնաւոր առևտրական պայմաններ կապէ օտար տէրութեանց հետ չը տալով նոցա պաշտօնական ձև: Այդ տեսակ մասնաւոր պայմանները ստորագրելու են օտար տէրութեանց արտաքին գործոց նախարարները և ոչ ինքեանք միապետք: Ռուսաստանը և Աւստրիան չեն ընդունում այսպիսի սահմանափակութիւններ: Գերմանիան ևս համախոհ գտնվեցաւ նոցա: Վերյիշեալ տէրութեանց ներկայացուցիչները հերքում են Տաճկաստանի հայեացքը, ասելով թէ մասնաւոր պայմանները ապահովութիւն չեն ներկայացնում Եւրոպայի համար և թէ ոչ մի տէրութիւն չէ համաձայնիլ վաւերացնել մի այնպիսի դաշնաթուղթ, որի մէջ յիշած լինի Տաճկաստանի թոյլտուութեան մասին: Եւրոպական միւս տէրութիւնները հակառակ են այս հայեացքին: Նոքա վախենում են մի գուցէ սորանով միջոց տան Տաճկաստանի հպատակ իշխանութեանց լիակատար ազատութիւն ստանալու և Տաճկաստանի թուլանալով—արևելեան հարցի զարթելուն:

—Neue Freie Presse լրագրում տպած է Տաճկաց կառավարութեան պատասխանը, որ ուղղած է իւր դեսպաններին Պետերբուրգում, Բերլինում և Վիեննայում: Տաճկաց կառավարութիւնը յայտնելով, որ նա միշտ պատրաստ է մեծ տէրութեանց ցանկութիւնները լրացնելու, յայտնում է սորան, որ այս զիջումը կարող է 1856ի դաշնագրի դէմ նորանոր զիջումներ առաջացնել. ուստի այդ հարցի մասին այլ ևս խօսակցութիւնք ունենալը աւելորդ է համարում, կրկնելով Ռումինիայի կառավարութիւնը թող ամեն անգամ դիմէ իւրեան առևտրական դաշնագրութեանց համար թոյլտուութիւն ստանալու, եթէ կամենում է կապել նոր դաշնագրութիւններ:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Նոր զինուորական օրէնքով 1853 թուականին ծնած Հրէաները պիտի զինուորագրվին: Այնինչ, ինչպէս լսում ենք, ծննդական վկայականներից երեւում է, որ նոյն տարին ոչ մի արու խորայելացի չէ ծնած. զարմանալի երեւոյթ։

—

«Anglo-American Times» լրագիրը բերում է հետաքրքրական վիճակագրական տեղեկութիւններ ամերիկական գլխաւոր լրագիրների արդիւնքների մասին, որ ստացւում է յայտարարութիւններ տպելուց։ Յայտարարութիւններից ստացած տարեկան ընդհանուր գումարը հասնում է 40,500,000 ֆրանկի։ Այդ գումարից տարէնը 10 միլիօն կամ օրէնը 30,000 ֆրանկ ստանում է «Herald» լրագիրը։ (Լոնդոնի «Temes լրագիրը դորանից աւելի է ստանում)։ Գերմանական «Staats-Zeitung» լրագիրը ստանում է մօտ 9 միլլիօն ֆրանկ: «Neu-York Times» լրագիրը ստանում է 7 միլլիօն 300 հազար ֆ. և այլն: Յայտնի է առհասարակ, որ ամերիկական մեծ լրագիրներից ոչ մինը յայտարարութեանց համար 5 հարիւր հազար ֆրանկից պակաս չէ ստանում։

Նիւ-Եօրկի վաճառական Սիւարտը իւր յայտարարութիւնները տպել տալու համար տարէնը վճարում է 2, 500,000 ֆրանկ։ «Լորդ և Տայլօր» ընկերութիւնը վճարում է իւր յայտարարութիւնների համար 1,145,000, Բէլլեկը վճարում է 1,115,000 ֆ.։ Րոբերտ Բօնէրը վճարում 1 միլլիօն ֆրանկ։ Արնոլդը և Կոնստեբլ վճարում են 875,000 ֆրանկ. իսկ երեւելի Բարնումը վճարում է 2 միլլիօն ֆրանկից աւելի։

—

Հայ երիտասարդներից կազմուած մի խումբ կտայ, շարունակաբար մէկ քանի ներկայացումներ բարեգործական նպատակով։

Առաջին ներկայացումն կը լինի Նոյ. 17։ Այս անգամ կը ներկայացուին, 1) Շկոլի վարժապետ, 2) Դալալ Գագօ, 3) Զաւէշտ և 4) Քաղցածներ:

Վաղօրոք տոմսակներ կարելի է ստանալ պ. Վարդանեանցի և ընկ. գրատանը Մ. և Գ. Թառայեանի լամպայի մագազինում։ Մանրամասն տեղեկութիւնք առանձին ափիշներում։

—

Ճապոնիայում այժմ մշակւում է 32 ոսկու հանք, 118 արծաթի հանք, 300 պղնձի հանք, 22 երկաթի, 6 արճճի, 52 անագի, 3 լիգանագարի, 412 քարածուխի, 12 ծծմբի, 5 չիրի և 118 նաւթի՝ որոնց համար Եւրոպայումը չինել են տալի նոր մեքենաներ:

—

Քաղաքային վարչութեան արած կարգադրութիւնը ապալայ ընտրութեանց մասին քաղաքացիների վերայ մեծ տպաւորութիւն է գործում. այս առթիւ պ. Գ. Եւանգուլեանցը տպագրել է «Тиф. Вѣст.» լրագրի № 109 մի նամակ, որի մտքերը համաձայն են Մեղուի այս համարում տպած նամակների մտքերին։

—

Չինաստանցիք ընդդիմանում են կարի մեքենաներին սպա աշխատանքի գինը ցածրացնում են և վնասում դերձակներին։ Միքանի Չինաց դերձակները սկսեցին գործ դնել կարի մեքենայ և դորա համար ենթարկուեցան ժողովրդի բռնութեանը և արտաքսուեցան համքրութիւնից։

—

Վենետիայումը մի քանի տարի սորանից առաջ մեռաւ մի չատ սպասաւոր կին, որ իւր բոլոր կարողութիւնը կտակեց կատուներին։ Նա իւր կտակի մէջ մանրամասն հրահանգներ էր տուել կատուներին իւր մահից յետոյ պահելու մասին։ Մի գերդաստանի անդամներ նշանակուած էին կտակակատար։ Դրամագլուխը դրվեցաւ խնայողական դրամարկղը։ Դրամագլխի տոկոսքի կէսը նշանակած էր կատուներ պահելու համար, մի քառորդը կտակակատարների համար, իսկ միւս քառորդն այն ընտանիքի համար, որ պէտք է պահպանէր կատուներին։ Կատուների թիւը 12 էր, նոցանից 6-ը արու և 6-ել էգ։ Նոքա պահպանւում էին զոյգ զոյգ։ Կտակի մի յօդուածով սաստկութեամբ արգելւում էր այդ կատուներին թոյլ տալու ուրիշ կատուների հետ յարաբերութիւն ունենալ։ Միայն կատուների օրինաւոր ժառանգները կարող էին օգուտ քաղել կտակից։ Այդ կատուների ցեղը վերջանալուց յետոյ՝ ժառանգութիւնը պէտք է անցնէր կտակակատարների և կատուները պահպանողների ձեռքը։ Կտակի մի այլ յօդուածով պատուիրուած էր, որ եթէ կատուները չնչվին չարաչար ձեռքերից, այն ժամանակ ժառանգութիւնը անցնում է յօգուտ Մեղլինգ քաղաքի չքաւորներին։ Այն ժամանակից բոլոր կատուները կոտորուեցան, բացի մի արու կատուից և կտակակատարները իւրեանց համարում են արդէն այդ բաւականին մեծ գումարի ժառանգ։ Բայց Մեղլինգ քաղաքի Բարեգործական ընկերութիւնը դատ բացեց նոցա դէմ ապացուցանելով, որ նոքա կտակակատարի կամքը եղծելով սպանել են բոլոր կատուներին։ Ժողովուրդը մեծ հետաքրքրութեամբ սպասում է այդ գործի վախճանին, որ բաւականին դժուարութեանց կ'ենթարկէ Մեղլինգի դատաւորների սրամտութիւնը։

—

Այս տարի կատարւում է գետնախնձորի Եւրոպա մտնելու հարիւրամեայ տարեդարձը։ Թէպէտ գետնախնձորը հարիւր տարի դորանից առաջ էր բերուած Եւրոպա, բայց նա չէր կարողանում տարածուել մինչև որ 1774 թ., իսկ Ֆրանսիայի գիտնական Պարմանտէին յաջողեց համոզել Լուդովիկոս 16-դին, որ գիւղատնտեսականութեան օգտի համար պաշտպանութիւն անի նորա մշակութիւնը։

—

Վենետայումն այս մօտերումս մի ամբողջ գերդաստան լեղի իրան թունաւորեց, որ ազատուի իւրեան ապառնացող աղքատութեան ցաւից։ Թունաւորիչը էր արհեստական ծաղիկներ շինող Թոմաս Բուգոլֆը, որի արհեստն այլ ևս դուրս չէր գնում, հետևաբար նա ստիպուած էր իւր գերդաստանը պահելու համար ահագին տոկոսներով պարտք անել, որի վճարիլը անկարելի էր իւր ձեռքի աշխատանքով և պարտատէրերը սպառնում էին դատ բանալու նորա դէմ և մեղադրում էին նորան անազնուութեան մէջ։ Այդ բոլոր հանգամանքները ստիպեցին նորան նախ որդիներանցը և ապա իւրեան զրկել կեանքից։ Նորա կին Մարիամը, որի հետ նա վայելում էր ամուսնական երջանկութիւն, իւր ազատ կամքով հետևեց նորան դէպի մահ։

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ախալցխայի մեր բաժանորդներին՝ խմբագրութիւնս խնդրում է Ձեզ լրագրի բաժանորդագինը շուտով հասցնել մեր այնտեղի գործակալին մեզ ուղարկելու։

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Նոյեմբերի 8-ին.

Ոսկին (պօլուիմպերիալ)...	5 —	80
Արծաթը հին մանէթ......	1 —	12½
Հին արասանոցն (5 հատը)	1 —	5
Փոխանակագիր Պօլսում		
վճարելիք Օսմանեան լիրա	6 —	65
փոխանակագիր Պարսկաս։	4 —	49
» » անգլիական լիրան	7 —	16
Լանքորի բրինձն առաջին	189 —	„
Երկրորդը	189 —	„
Բամբակը Երեւանի, ...	5 —	20
Ամերիկայի սերմից	7 —	„
Ցորենը տեղական	10 —	„
Որդան կարմիր առաջինը ...	120 —	„
« » երկրորդն ...	80 —	„
Մետաքսը Նուխու լաւը...	135 —	50
— խէջեթու ...	115 —	„
Բուրդը Թուշու	7 —	20
Թարաքամի	5 —	10
Շաքարը ռսի...	8 —	55
Արտասահմանեան... ...	8 —	20
Շաքարաւազը	7 —	60
Ծխախոտը Տրապիզոնի լաւն	15 —	„
Սամսոնը 10ից— 50ը	—	„
Կեօբակի 25ից— 75ը	—	„
Բօխչայի 15ից— 54ը	—	„
Սուրճը Մոկկայի...	— 20 —	50
Լեօնցկին (հասարակ) ...	17 —	„
Մոմը բնաճարպի (ստէարին)	10 —	40
Ճրագու	5 —	20
Երկաթը ձողաձև (բրուսկ)	3 —	10
Ցախատակ (լիստովի)...	4 —	20
Մեխայուն	3 —	„
Ցինկ	5 —	20
Պղինձը անգլիու	14 —	„
տեղական	10 —	25
Անագը (կլայեկ)...	13 —	60
Անուշադրը (նիշադուր) ...	7 —	10
Աղը հասարակ	„ —	70
Պղպեղը	11 —	20
Լեղակը, առաջինը	120 —	„
» » երկրորդն	90 —	„
Ալիւրը հասարակ	1 —	20
Պեսանովինն (Ջիլալը)	20 —	„
Ալեքպոլինը... 1,	15 —	„
2,	12 —	80
3,	10 —	„
Բրոդսկի ալիւր...	14 —	„
Բրինձը Լանքօրանի... ...	2 —	45
Գարին	„ —	70
Սպիրտ 83 աստիճանի...	7 —	63
Նաւթը	2 —	65
Օճառ (սապոն)...	3 —	20
Իւղը	11 —	50
Ձէթը կտաւատի...	5 —	20
Կնճիթի (քունջութի) ...	9 —	20
Շիբն	2 —	40
Գլատին	7 —	„
Արճիճն	4 —	20
Մեղրամոմ	24 —	„
Խունկն	7 —	50
Ձաւն	2 —	20
Վերմիշել և մակարօն Ռուս.	5 —	„
Օդեսու	6 —	20
Տեղական... ...	4 —	30
Սագոյ ալիւրն...	4 —	80
Գրեչիշնի...	1 —	40
պերլովիյ	4 —	80
Կրուպայ Մաննիյ	3 —	20
Կրուպչատկան Ա. Բաբանասովինը և ընկ. ... № 1)	14 —	10
№ 2)	10 —	50
№ 3)	8 —	70

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Փոստը

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍԻԲԻՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բոլոր տեղերը, (բացի Պարսկաստանից և Ասիական-Տաճկաստանից) գնում է ամեն օր բացի կիրակի օրից։

ԵՐԵՒԱՆ	— Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ	— Չորեքշաբթի և ուրբաթ։
ՆՈՐԲԱՅԱԶԷԹ	— Չորեքշաբթի։
ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹ. ՎԵՐԱՅ ԳՏԱՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ	— Ամեն օր, բացի կիրակի։
ԶՈՒԳԴԻԴ	— Չորեքշաբթի։
ՕԶՈՒՐԳԷԹ	— Երկուշաբթի և ուրբաթ,
ԱԽԱԼՑԽԱ	— Երկուշաբթի և ուրբաթ.
ԲՈՐԺՈՄ	Երկուշաբթի և ուրբաթ, իսկ մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ամեն օր բացի կիրակի օրից։
ԲԵԼԻ-ԿԼԻՒՉ (Աւճալա)	— Երկուշաբթի և ուրբաթ,
ԲԱՔՈՒ (Ելիզավետպօլի վերայ)	— Երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթ։
ՆՈՒԽԻ, ՑԱՐՍԿԻ-ԿՈԼՈԴՑԻ (Թելաւ-Սիղնաղի վերայ) և ԶԱՔԱԹԱԼԱ, ՍՂՆԱԽ, ԹԵԼԱՒ և ԼԱԳՕԴԵԽ։	Երկուշաբթի և շաբաթ։

—

ՓՕԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

ԹԻՖԼԻԶԻՑ գնումէ ճանապարհորդների գնացքը առաւօտեան 8 ժ. 18 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 1 ժ. 11ր. և ՓՕԹԻ գիշերուայ 11 ժ 27 ր. խառն գնացքը գնում է՝

ԹԻՖԼԻԶԻՑ երեկոյեան 8 ժ. 17 ր. և հասնումէ ԽԱՇՈՒՐ առաւօտեան 4 ժ. 30 ր:

ՓՕԹՈՒՑ գնումէ ճանապարհորդների գնացքը առաւօտեան 7 ժ. 38 ր. եւ հասնում ԽԱՇՈՒՐ 5 ժ. 11ր և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 49 ր։

ԽԱՇՈՒՐԻՑ առաւօտեան 7 ժ. 15 րոպ. և հասնում է ԹԻՖԼԻՍ 3 ժ. 13 ր. ճաշից յետ։

—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում) բաց է Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 3 ժամը։

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ թեթեւ հիւանդների համար գտնվումէ Սեմինարիայի դիմացը Յ. Զիթախեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը:

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Պ. Յ. Նազարեանցը գտնվում է այժմ Վ. Ագուլիսում և նախապաշարմունքների վերաբերութեամբ իրեն նիւթեր ուղարկել ցանկացողներին տալիս է հետեւեալ հասցէն. „чрезъ Ордубадъ въ Акулисъ, Армянское духовное училище, Учителю Ивану Назарьянцъ:“

ԹԱՆԳԱՐԱՆ

ԳՈՒՆԻՐԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎԵՐԱՅ

Ընդհանրական Թանգարանի տէրը յայտնելով իւր շնորհակալիքը Թիֆլիսի պատուելի հասարակութեանը իւր Թանգարանի այցելութեան համար, յայտնում է, որ նոյեմբերի 3 ից՝ կիւրակէ օրից մուտքի համար իւրաքանչիւր ոք վճարելու է 30 կոպ.

ԼԻՏԷՎՍԿԻՅ։

Պարտք եմ համարում յայտնել այն արժանապատիւ քահանայից և ժողովրդեան, որոնք հրահանգութիւն ունեն ի վիճակային կոնսիստորիայէն Հայոց Վրաստանի և Իմերէթի ուսանելու Հայկական Եկեղեցական Ձայնագրութիւնը (Նօտայ), ցուցակագրվին, որովհետև շուտով սկսուելու են նոյն Ձայնագրութեան դասերը:

Այս մասին, պատիւ եմ համարում խոնարհաբար յայտնել և հոգևոր կառավարութեանց և գործակատարաց, որ որքան կարելի է շուտով ուսանող դպրաց հասուցանելու Տփխիս վերոյիշեալ արհեստը ուսումնասիրելու համար:

Եզնիկ քահանայ Երզնկեան.

Մամուլի տակից դուրս եկաւ պ. Ղազարոս Աղայեանցի գրքոյկը „Հայկական հէքիաթների մասին“։ Գինն է՝ Ռուսաստան 25 կ. Թուրքիա 1 ֆրանկ։ Գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմելու, Թիֆլիսում Մեղուի և Մշակի խմբագրատանը, պ. Վարդանեանի և Վիմանի գրավաճառանոցները և պ. Աբգար Յովհաննիսեանին. Ալեքսանդրապօլում պ. Ղ. Աղայեանցին. Ախալցխա պ. Գ. Բարխուդարեանին և Կ. Պօլիս. „Մասիս“ խմբագրութեանը:

Համբարձում Ենֆիաճեանցի և ընկ. տպարանումը վաճառվում են չափաւոր պայմաններով, նոյն տպարանի հաշւով հրապարակուած հետեւեալ գրեանքը:

	1 օրինակի.	10 օրինակի.	25 օրինակի.
1) ԱՒԵՏԱՐԱՆ ՃԱՇՈՑ և իւրաքանչիւր աւուրց ի տարւոջն, ի վերջոյ ունի նշեալ յաւելուած, Աւետարանացն՝ Խաչբերից, Տօնից, և Անդաստանի և ցայգ Համբարձման և Ճրագալոյց աւետարանօք. Տպած է կարմիր և մաքուր թղթի վերայ, խոշոր տառով, և մեծ գիրքով։ Տփխիս 1867։	1,50կ.	10 ռ.	20 ռ.
2) ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԴԱՐԵՐԻ, միջին կարգի ազգային դպրոցաց համար, աշխատասիրութիւն պ. Պետրոսի Սիմէօնեանց, աշխարհիկ բարբառով, կարմիր թղթի վերայ մաքուր տպած։ Տփխիս 1867 ա. 8° (ութածալ), եր. 162,	50 կ.	4 ռ.	8 ռ.
3) —Նոյն, միջին դարերի, Տփխ. 1867 ա 8°, եր. 129	45 կ.	3 ռ.	6 ռ.
4) ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ և սկզբնական ընթերցանութեան դասագիրք, այլ և այլ գործնական կրթութիւններով, աշխատ. Ստ. Պալասանեանի։ Տփխիս. 1865 ա. 8° եր. 96	20 կ	1,50կ.	4 ռ.
5) ՀԱՄՌՕՏԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ. երկասիրութիւն ամենայ պատմութիւն Հասոնեան Անդրէ փարիզեցու Յ. Ալլէրեանի։ 1868. Տփխիս ա. 8° եր. 528	1 50կ	10 ռ.	20 ռ.
6) Հայկական թատրոն. ԳԻՇԵՐՎԱՆ ՍԱՐԸ ԽԷՐ Է Տփխիսու կեանքից վօդևիլ մէկ արարուածով, Հեղինակ. Գ. Սունդուկեանցի։ Տփխիս 1866 ա. 8° եր. 25	10 կ.	75 կ.	1.25կ.
7) Հայկական թատրոն. ԷՍ ԷԼ ՄՕՑԻՔԼՈՒԹԻՒՆ, կամ զակուսկա, ճաշ, խրխնջոց, ֆարս վօդևիլ մէկ արարուածով. Տփխիսու կեանքից, Հեղինակ Մ. Տէր Գրիգորեանցի։ Տփխ. 1866, ա. 8° եր. 31	10 կ.	75 կ.	1.25կ
8) ՄԱՏԱՂ ՀԱՅՍԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆ. կամ մարմնաշարժութեան (մեռնողութեան) վտանգաւոր հետեւանքները. Տփխիս 1866 ա. 8° եր. 81	10 կ.	50 կ.	1 ռ.
9) ԿԵՐԱԿՈՒՐ ՄԱՐԴՈՑ, որոյ մէջ պարզ և հետաքրքրական ոճով բացատրուած է բազում սննդամթերք, ծագումը, ինչով կերակրվում և ինչ են խմում մարդիկ զանազան կողմերում, մարդակերների նկարագրութիւնը, օգի կարևորութիւնը. Թարգմ. Յ. Մարաթեանցի. Տփխիս 1871 ա. 12° 89 եր.	20 կ.	1,50կ.	2,50կ
10 ՍԻՐԻՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻԴ, պատմութիւն գաղթականների կեանքից Հիւսիսային Ամերիկայում, Թարգմ. Յ. Միրզաբէգեանց Տփխիս 1869 ա. 12 եր. 150	25 կ.	2 ռ.	4 ռ.
11) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ Տփխ. Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի։ Տփխ. 1866 ա. 12° եր. 32	30 կ.	2 ռ.	3,75կ.
12) ՆՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԻՆ. և տեսութիւն Հայաստանի և նորա այժմեան վիճակին վերայ, կազմեալ վարդապետի Շահնազարեանց. Տփխիս 1863 ա. 3° եր. 112	80 կ.	6 ռ.	12,50.
13) ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ, որ է աշխարհիկ բարբառով, ազգային եւ արեւելեան առակներ, առասպելներ, աւանդութիւններ, և ի վերջոյ, Թարգմանութիւն, ֆէօդօրա, կամ որդիական սէր, Առաքեանի. Տփխիս. 1864 ա. 12 եր. 138	60 կ,	4 ռ.	7.50կ
14 ՀԱՍԱՐԱԿԱՑ ԲԺՇԿԱՐԱՆ, Ա. Յանկարծ մահ պատճառող դիպուածները և նոցա առ ձին դեղերը, Բ. Շնչառութեան գործարանների ախտերը. Գ. Արիւնաշրջանութեան ճանապարհների և արեան ախտերը, բժիշկ Գ. Ռստոմեանցի. 1862 Տփխիս ա. եր. 96	60 կ.	4 ռ.	7,50կ.
15) ԱՂԱՍԻ, Ազգային ողբերգութիւն հինգ արարուածով, (Խաչատուր Աբովեանցի «Վէրք Հայաստանի» վէպը թատերգութեան փոխադրուած) պերճ Պռօշեանցի. Տփխիս 1863. ա. 8° եր. 75	50 կ.	3,50կ.	
16) ԵՐԿՈՒ ՔՈՅՐ, եղերական վէպ (ազգային) գիւղական կեանքից, Ղազարոս Աղայեանց. Տփխիս 1872. ա 12° եր. 108	50 կ.	4 ռ.	7,50կ.
17) Արհեստ բաղդաւորելոյ (մարդալ) շինելոյ, Յովհաննու Մամիկոնեանց Տփխիս 1861 ա. 12° եր. 136	50 կ.	3 ռ.	7,50կ.
18) ԿՌՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ամսագիր բարոյական, բանասիրական, նկարագրական և վիճակագրական 1860, 1861, 1862 և 1863 դարիների, իւրաքանչիւր տարուան տետրակները երկու թղթակազմ հատորի մէջ ամփոփած,	8 ռ.	60 ռ.	125ռ.
19) ՄԵԾ ՄԱՐԴԵՐԻ պատմութիւններ, միջին և նոր դարերում, փոխադրեց Գ. Տ. Մ. Թիֆ. 1873 ա. 16. 261 եր. գինն է 1. բայց այժմ ծախվումէ	30 կ.	2 ռ.	4 ռ.

ՕՐԱՑՈՅՑ 1875 ամի

ՓՈՔՐԱԳԻՐ

ծախվումէ պ. Վարդանեանցի եւ ընկ. գրավաճառանոցում. գինն է 12 կ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 8-го НОЯБРЯ 1874 г,

Типографія А. Энфіаджіанцъ и К-°

Տուն Բժշկապետ Մ. Ռօտինեանցի.